ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հայաստանի Հանրապետություն պաշտոնական այցի շրջանակում հունիսի 28-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին այցելեց Հունաստանի Հանրապետության նախագահ Կարոլոս Պապուլիասը տիկնոջ՝ Մեյ Պապուլիասի հետ՝ ուղեկցությամբ ՀՀ Տարածքային կառավարման նախարար, փոխվարչապետ Հովիկ Աբրահամյանի:

Վեհարանում բարձրաստիճան հյուրին ընդունեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Ուրախություն հայտնելով հայոց սրբություն սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին Հունաստանի նախագահի այցի առիթով՝ Նորին Սրբությունը ներկայացրեց Հայոց Եկեղեցու հոգևոր կենտրոնի կարևոր առաքելությունը հայ ժողովրդի կյանքում:

Վեհափառ Հայրապետը գոհունակություն հայտնեց, որ այսօր հայրենի պետությունը զորացնում է բարեկամական կապերը Հունաստանի Հանրապետության հետ՝ նշելով, որ հայ ժողովուրդը դարեր ի վեր հարուստ առնչակցություն և բարեկամական սերտ հարաբերություններ ունի հույն ժողովրդի հետ: Նորին Սրբությունն անդրադարձավ նաև Հայ Առաքելական և Հույն Ուղղափառ Եկեղեցիների միջև առկա ջերմ հարաբերություններին՝ վերհիշելով իր հանդիպումները Տիեզերական Պատրիարք Բարդուղիմեոս Ա-ի և Աթենքի ու Հունաստանի Արքեպիսկոպոս Քրիստոդուլոսի հետ, ինչպես նաև Տիեզերական Պատրիարքի այցը Հայաստան 2001 թվականին:

Ամենայն Հայոց Հայրապետը հանուն հայ ժողովրդի շնորհակալություն հայտնեց նախագահ Կարոլոս Պապուլիասին Հունաստանի՝ կյանքի տարբեր ոլորտներում Հայաստանին մշտապես ցուցաբերվող աջակցության, ինչպես նաև Հունաստանում բնակվող հայ համայնքի հանդեպ հոգատար վերաբերմունքի և ուշադրության համար: Նորին Սրբությունը գոհունակությամբ արձանագրեց նաև, որ Հունաստանի իշխանությունների շնորհիվ ամեն տարի Մայր Աթոռի միաբաններին տրամադրվում է երկու կրթաթոշակ՝ շարունակելու հոգևոր ուսումնառությունը Հունաստանի կրթական բարձրագույն հաստատություններում:

Հունաստանի նախագահն իր հերթին շնորհակալություն հայտնեց ջերմ ընդունելության համար: «Թե՛ Հայ և թե՛ Հույն Եկեղեցիները պատմության ընթացքին պայքարեցին բարձր իդեալների համար՝ ի խնդիր հավատի: Ի՞նչ պիտի լիներ մեր ժողովուրդների ապագան առանց մեր Եկեղեցիների...»,- նշեց նախագահը՝ անդրադառնալով Եկեղեցիների կարևոր դերակատարությանը երկու ժողովուրդների կյանքում: Պարոն Պապուլիասը, խոսելով Հայաստան կատարած իր այցի մասին, ընդգծեց, որ ընդհանուր է երկու ժողովուրդների ապագան և ճակատագիրը՝ ձեռք ձեռքի, թիկունք թիկունքի պիտի ընթանան դեպի ապագան:

Հանդիպմանը անդրադարձ եղավ պատմության ընթացքին հայ և հույն ժողովուրդներին բաժին ընկած փորձություններին: «*Մենք կրել ենք մեծ կորուստներ անց-*

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ Է
ՆՎԻՐՈՒՄ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐՎԱԳԱԶԱՐԴ ԽԱՉ ԵՎ «Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԳԱՆՁԵՐԸ» ԱԼԲՈՄԸ

ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԸ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ Է
ՆՎԻՐՈՒՄ ՀՈՒՆԱՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՆԱԿԵ

ՄՈՄԻԿԻ ԳԵՂԱՐՀՅՈՒՍ ԽԱՉՔԱՐԻ ԱՌՋԵՎ

նող դարում: Մեր արդար իրավունքների պաշտպանությունը պարտավորեցնում է մեր ժողովուրդներին և պետություններին, որպեսզի ըստ ամենայնի զորակից և աջակից լինեն միմյանց: ...Մենք հավատի ժողովուրդ ենք, իսկ հավատը միշտ հաղթանակներ է արձանագրում»,- ասաց Նորին Սրբությունը:

Վերջում Վեհափառ Հայրապետը մաղթեց, որ հավատի վրա խարսխված ջերմ, եղբայրական, բարեկամական հարաբերություններն անանց լինեն և առաջնորդեն երկու ժողովուրդներին իրենց բարի և արդար երազների իրագործմանը:

Հանդիպմանը ներկա էին ԱՄՆ հայոց Արևելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը, Մայր Աթոռի Վարչակազմակերպական գործերի կառավարիչ Տ. Փառեն եպիսկոպոս Ավետիքյանը և Մայր Աթոռի միաբաններ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ